ՆԵՐՍԵՍ ԹՈՎՄԱՍՅԱՆ

1980 թ. նոյեմբերի 17-ին մեզանից հեռացավ գիտության անխոնջ մշակ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, վաստակաշատ դասախոս Ներսես Իսֆայելի Թովմասյանը։ Ն. Թովմասյանը ծնվել է 1910 թ. Վտնի նահանգի Հայաձորի շրջանի Հայք գյուղում։ Ճակատագրի ոլորումով մայրը իր երկու երեխաներով փրկվում է 1915 թ. եղեռնից և ապաստանում Երևանում։ Ներսեսը նախնական կրթությունը ստանում է մանկատանը, ապա, ավարտելով Աբովյանի անվան միջնակարգ դպրոցը, անցնում է մանկավարժական աշխատանքի։ Մանկավարժությունը, հավանաբար, նրա բնական կոչումն էր. ողջ կյանքում մինչև ծերություն Ն. Թովմասյանը կրթել ու դաստիարակել է յաղմաթիվ աշակերտներ, ուսանողներ ու ասպիրանտներ։ Սովորել ու սովորեցնել՝ այս է եղել նրա գիտական ու գործնական կյանքի բովանդակությունը։

1937 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը, Թովմասյանը մնում է համալսարանում՝ որպես վիճակագրության առարկայի դասախոս։ Հայրենական պատերազմի տարիներին մեկնում է ռազմաճակատ։ 1945—1947 թթ. աշխատում է հանրապետության Ֆինանսների մինիստրությունում, միաժամանակ Ֆինանսական տեխնիկումում վարում վիճակագրության տեսության և պետական բյուջեի դասընթացները։ 1947 թ. Ն. Թովմասյանը ընդունվում է ասպիրանտուրա՝ Երևանի պետական համալսարանի քաղաքատնտեսության ամբիոնում և 1951 թ. պաշտպանում «Բուլղարիայի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը» թեկնածուական դիսերտացիան։ Այդ ընթացքում քաղաքատնտեսության առարկային զուգահեռ վարում է տնտեսագիտական մտքի պատմության դասընթացը։

1963 թ. Ն. Թովմասյանը ընտրվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դեկան և այդ պաշտոնում աշխատում մինչև 1966 թ.։ Նրա շանքերով համալսարանում կազմակերպվում են առևտրի և ապրանքագիտության տնտեսագիտական նոր ֆակուլտետ, տնտեսագիտական կիբեռնետիկայի բաժին՝ համապատասխան ամբիոններով հանդերձ։ 1966 թ. Ն. Թովմասյանը փոխադրվում է ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ՝ սկզբում որպես գիտական գծով դիրեկտորի տեղակալ, ապա՝ տնտեսագիտական մտքի պատմության բաժնի վարիչ։

Ն. Թովմասյանի մանկավարժական գործունեությունը հագեցված է բեղմնավոր գիտական ուսումնասիրություններով։ Նրա գրչին է պատկանում «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» հայերեն առաջին աղբյուրագիտական ծավալուն ուսումնական ձեռնարկը (1965), որն առ այսօր ուսանողների և ասպիրանտների սեղանի գիրքն է։ 1963 թ. դրած «Արգի հակամարքսիստական քաղաքատնտեսության քննադատության ուրվագծեր» ծավալուն մենագրությունը ուսանողության համար մեծ չափերով դյուրացնում է առարկայի այդ բաժինների յուրացումը։ Ժամանակակից բուրժուական տնտեսագիտական հոսանքների ուսումնասիրությունը Թովմասյանի գիտական հետաքրքրությունների կարևոր բնագավառներից է, որին նա նվիրել է երեք աշխատություն՝ «Աշխատավարձի ժամանակակից բուրժուական տեսությունների ռեակցիոն էությունը» (1955), «Մանրբուրժուական տնտեսագիտության քննադատության ուրվագծեր»

(1961), «Ժամանակակից բուրժուական ռեֆորմատորական քաղաքատնտեսության հիմնական ուղղությունների քննադատություն» (1974)։ Տնտեսագիտության մեջ այս հարցերին առնչվող մայրենի լեզվով գրականության ստեղծումը պետք է համարել Ն. Թովմասյանի կարևոր վաստակը։

Մարքսիստական բաղաքատնտեսությունը անհրաժեշտ խորությամբ լուսաբանելու նպատակով Թովմասյանը դասընթացի այդ բաժինը ներկայացրել է առանձին մենագրությամբ՝ «Հավելյալ արժեքի թեորիան Մարքսի տնտեսական ուսմունքի անկյունաքարն է» (1959)։

Միջնադարյան հայ տնտեսագիտական մտքի պատմությունը ստեղծելու համար նախ անհրաժեշտ էր հաղթահարել գրաբարի իմացության հետ կապված դժվարությունները, առանց որի անհնար կլիներ վերհանել միջնադարյան հայ մատենագրության տպագիր ու ձեռագիր ֆոնդերում եղած տնտեսագիտական մտքի գանձերը և դրանք մասնագիտորեն գնահատել։ Թովմասյանի տքնաջան աշխատանքի առաջին արդյունքները երևացին 1965 թ.՝ «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն» ուսումնական ձեռնարկի միջին դարերին նվիրված բաժնում։ Այստեղ առաջին անգամ ուրվագծվում է հայ տնտեսագիտական մտքի պատմությունը V—XIV դդ.։ Իսկ 1966 թ. լույս է տեսնում «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» մենագրությունը։

1968 թ. Թովմասյանը պաշտպանում է «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը IX—XIV դարերում» դոկտորական դիսերտացիան, որը կրճատումներով լույս է տեսնում 1970 թ.։ Այդ նույն ժամանակաշրջանում պատրաստ էր նաև «Հայ տնտեսագիտական միտքը հետպատերազմյան շրջանում» աշխատությունը, որը դեռևս մնում է ձեռագիր վիճակում։ Անտիպ է նաև «Հայ տնտեսագիտական միտքը 150 տարում» 35 մամուլ ծավալով աշխատանքը։ Այդ մենագրությունների հրատարակությունը ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից կլրացնի հայ տնտեսագիտական մտքի պատմության մի շարք կարևոր շրջանների ուսումնասիրության գործը։

1973 թ. լույս է տեսնում Ն. Թովմասյանի «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը V—VIII դարերում» երկասիրությունը, իսկ 1976 թ. Մ. Գրիգորյանի հեղինակակցությամբ՝ «Հայ աբնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» ծավալուն մենագրությունը։ Այս աշխատությունը ընդգրկում է խորհրդահայ տնտեսագիտական մտքի ձևավորման և զարգացման նախապատերազմյան շրջանը։ 1982 թ. լույս է տեսնում «Սոցիալ-տնտեսագիտական միտքը Հայաստանում XV—XVIII դարերում» մենագրությունը։

Արևմտյան Հայաստանում հատկապես XIX դ. երկրորդ կեսին ստեղծվում է հոգևոր հարուստ մշակույթ։ Այդ ժամանակաշրջանի անվանի հրապարակախոսների գրական ժառանգության մեջ բարձրացվում են երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի հետ կապված տընտեսագիտության տեսական ու գործնական բնույթի բազմաթիվ հարցեր, որոնք հարուստ նյութ են պարունակում տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրության համար։ Արևմտահայ մտավոր իրականության մեջ հայտնվում են քաղաքատնտեսության մի շարք դասագրքեր, տնտեսագիտական ուղղությունները բնութագրող հոդվածներ, որոնք բացառիկ նշանակություն ունեն հայ տնտեսագիտական մտքի պատմության համար՝ մանավանդ, եթե հիշենք, որ արևելահայ հատվածում այդ կարգի աշխատություններ գրեթե չեն եղել։ 1988 թ. ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի քաղաքատնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինը լույս ընծայեց «Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր» ծավալուն մենագրությունը (հեղինակներ՝ Ն. Թովմասյան, Հ. Թամրազյան, Գ. Պապիկյան)։

1985—89 թթ. Թովմասյանը ձեռնամուխ է լինում ստյուդիահայ տնտեսագիտական մտքի պատմության ուսումնասիրությանը։ 1989 թ. կեսին տպագրության է ներկայացվել ամերիկահայ հրապարակախոս-տնտեսագետ «Լևոն Մարտիրոսյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքների քննական վերլուծություն» մենագրությունը (20 մամուլ ծավալով, Գ. Պապիկյանի հեղինակակցությամբ)։

Մեծ է Ն. Թովմասյանի վաստակը նաև տնտեսագիտության գիտամանկավարժական կադրերի պատրաստման բնագավառում։ Ներկայումս հանրապետության միջին սերնդի դասախոսներ, գիտության բազմաթիվ թեկնածուներ ու դոկտորներ եղել են Թովմասյանի ուսանողներն ու ասպիրանտները։ Թովմասյանի աշխատություններով, նրա թողած գիտական հարուստ ժառանգությամբ կկրթվեն ու կդաստիարակվեն նորանոր սերունդներ։

Գ. Թ. ՊԱՊԻԿՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու